# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 6 | Ծանոթություն- տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի | «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ | Վերնաշապիկը և տաբատը կիսաբամբակյա, կանաչ գունաքողարկված կտորից է: Կտորի երանգը համաձայնեցվում է Գնորդի հետ: Վերնաշապիկի օձիքը ծալովի, կտորի բաղադրությունը՝ 51% բամբակ, 49% պոլիէստեր, խտությունը՝ 215 գրամ մ2, թույլատրելի շեղումը համաձայն ԳՕՍՏ-ի: Կրծքամասում՝ ուղղանկյուն կպչուն կափույրով փակվող և շերտակարով վրադիր գրպաններ: Վերնաշապիկը կողքերից էլաստիկ ժապավենով ձգվող գոտիով է, հետևամասը՝ վերին կտրվածքով, կոճկվում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ կարճ, ուղիղ թևածալքերով: Ուսադիրների ամրակները կպչունակներով և գունաքողարկված կտորից են: Կրծքամասի ձախ գրպանի վերևի մասում ասեղնագործվում են «ՔԿԾ ՊԵՏ»՝ քրեակատարողական ծառայության պետի համազգեստին կամ «ՔԿԾ» տառերը՝ քրեակատարողական ծառայության պետի և տեղակալների համազգեստին՝ աջ գրպանի վերևի մասում՝ վերջինիս անվան, հայրանվան սկզբնատառերը և ազգանունը: Տաբատը վերնաշապիկի նույն կիսաբամբակյա գունաքողարկված կտորից է, իսկ առջևի մասը կոճկվում է |

| | | | |
|---|---|---|---|
| | | | կայծակաճարմանդով: Տաբատի դիմացի հատվածում փողքերի ամբողջ երկարությամբ բարակ կարվածքով: Ունի երկու կողային ներկարված գրպան, հետևի մասում ունի մեկ գրպան՝ կափույրով: Տեխնիկական բնութագրի ընդհանուր պայմանները և հանդերձանքի նկարները ներկայացված են կից՝ հավելված 1-ում: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 6 | | | |